

ԵՐԿՈՒ ՈՒՇԱԳՐԱՎ ՀԱՏՎԱԾ «ԱՎԵՍՏԱՅԻՑ»

Ավեստան զրադաշտական կրոնի սրբազան մատյանն է: Այդ կրոնը հին ժամանակներում և վաղ միջնադարում տարածված է եղել Իրանում և նրան հարևան մի շարք երկրներում: Մինչև հիմա այն պահպանվում է Հնդկաստանում բնակվող ֆարսերի մոտ: Գիտնականների մեծ մասը նեթադրում է, որ Ավեստան ծագել է մ. թ. տ. առաջին հազարամյակի կեսերին: Աքեմենյանների ժամանակ պաշտոնական կրոն է եղել Իրանում: Ավեստայի երկրորդ ծնունդը կապվում է Սասանյանների դինաստիայի հետ: Ինչպես վկայում է պատմիչ Նդիշեն, Սասանյաններն իրենց երկիրը կառավարում էին մոզերի օրենքներով:

Մինչև մեր օրերը հասել է ավեստական բնագրերի մեկ քառորդը: Ավեստայի մեջ մտնում են շատ գրքեր, որոնք ունեն տարբեր բովանդակություն: Գիտնականները պնդում են, որ ավեստական բնագրերն ունեն տարածամանկային, այլատարածքային և տարահեղինակային ծագում: Ավեստան դիտվում է որպես հնդեվրոպական ծագում ունեցող մի շարք ժողովուրդների ընդհանուր մշակութային մի հուշարձան, որը ներկայացնում է հին աշխարհի տնտեսական, քաղաքական, կենցաղային, մշակութային և կրոնական զարգացման մակարդակը: Միաժամանակ այն ունի բանահյուսական և գրական նշանակություն: Ավեստան համեմատվել է Աստվածաշնչի՝ Հին կտակարանի հետ: Փորձեր են արվել Հին կտակարանը դիտել որպես Ավեստայի հետևությունը ստեղծված մի գործ:

Ավեստան եվրոպական ժողովուրդներին հայտնի է դարձել 1771 թ. ֆրանսերեն հրատարակությամբ, որն իրականացրել է ավեստագիտության նախահայրը՝ Անկետիլ Դյուպերոնը: Այժմ ավեստագիտությունը ստեղծել է հսկայածավալ գրականություն:

Հայկական իրականության մեջ Ավեստայի մասին առաջին տեղեկությունները գտնում ենք V դարում Ծգնիկ Կողբացու, Նդիշի և Մովսես Խորենացու երկերում: Հայ հեղինակներն իրավացի և հասկանալի թշնամանք են տածում զրադաշտական կրոնի և Սասանյան Պարսկաստանի նկատմամբ, քանզի այդ կրոնը սպառնում էր հայերի ազգային ինքնությունը: Ենպեստում էր պարսիկների ձուլման քաղաքականությունը:

Ներկա հրատարակության աղբյուրը 1881 թ. Փարիզում լույս տեսած Ավեստայի բնագիրն է, որի հրատարակիչը պրոֆեսոր Ք. դը Հաուլեն է: Վերջինս գտնում է, որ իր հրատարակած բնագիրը, ի տարբերություն նախորդ ֆրանսիական և այլալեզու հրատարակությունների, ամենաամբողջականն է: Պրոֆեսոր Հաուլեն իր հրատարակությանը կցել է հանգամանալի դիտական առաջաբան և ծանոթագրություններ, որոնց մեջ առանձին գնահատանքով է խոսում հայ պատմիչներ Նդիշի և Մովսես Խորենացու մասին: Ներկա հայերեն թարգմանությունը կատարված է ավեստական հնագույն գրքից՝ «Վենդիդատից» և ներկայացնում է նրա երկու գլուխները:

Ա. Գ. ԴՈՒՌԻՆԱՆՅԱՆ

Վ Ե Ն Դ Ի Դ Ա Տ

II

I—1 Զրադաշտը՝ հարցրեց Ահուրա-Մազդային².

— Ահուրա-Մա՛զդա, վեհագույն հոգի, ստեղծող մարմնական աշխարհի, սուրբ էակ:

2 Ո՞ւմ հետ, առաջինը մարդկանցից, հաղորդակցվեցիր դու՝ դու, որ Ահուրա-Մազդան ես:

3 Ուրիշ ո՞ւմ, եթե ոչ ինձ հայտնեցիր քո օրենքը, օրենքը Ահուրայի, օրենքը Զրադաշտի:

II—4 Այնժամ Ահուրա-Մազդան ասաց.

— Դա գեղեցկությամբ փայլող Յիման³ է՝ ընտիր հոտերով:

- 5 Սա առաջին մարդն է, որ կանչեցի հաղորդակցվելու ինձ հետ, ես, որ Ահուրա-Մազդան եմ:
- 6 Մյուսն նրան, բացի քեզանից, հայտնեցի օրենքը, օրենքը Ահուրայի, օրենքը Զրադաշտի:
- III—7 Ես նրան ասում եմ, Զրադաշտ, ես, որ Ահուրա-Մազդան եմ:
- 8 Գեղեցկությամբ փայլող Յիմա՝ Վիվանհատյի որդի, ծառայի՛ր ինձ որպես օրենք տարածող, իմ օրենքը պահպանող:
- 9 Այնժամ գեղեցկությամբ փայլող Յիման ինձ պատասխանեց.
- 10 Ես ամենևին ստեղծագործող չեմ, ես բոլորովին կրթված չեմ, որ լինեմ օրենք տարածողը և քո օրենքը պահպանողը:
- IV—11 Ես նրան ասում եմ, Զրադաշտ, ես, որ Ահուրա-Մազդան եմ:
- 12 Եթե դու՝ Յիմա, չես կարող ծառայել ինձ որպես օրենք տարածող և պահպանող,
- 13 Այնժամ աճեցրու իմ երկրային ունեցվածքը, աճեցրու դրանք, եղի՛ր իմ երկրային էակներին պահպանողը, խնամակալը և տերը:
- V—14 Եվ շողշողացող Յիման ինձ պատասխանեց, Զրադաշտ,
- VI—15 Այո, ես կգործացնեմ քո երկրային քարիքները, ես նրանց կաճեցնեմ, ես կլինեմ քո երկրային էակների կերակրողը, նեցուկը և տերը:
- 16 Թող իմ թագավորության մեջ չլինեն ո՛չ սառը քամիներ, ո՛չ հրաբորբ ջերմություն, ո՛չ հյուծում, ո՛չ մահ:
- VII—17 Այնժամ ես նրան բերեցի համապատասխան գործիքներ, ես՝ որ Ահուրա-Մազդան եմ:
- 18 Մի ոսկե արոր և ոսկուց պատրաստված մի մտրակ:
- 19 Յիման հաստատվեց թագավորական իշխանության կայանում:
- VIII—20 Երեք հարյուր շրջան բաժին ընկավ Յիմա թագավորին:
- 21 Եվ այս երկիրը լցվեց հոտերով, քարշող անասուններով, մարդկանցով, շներով, թռչուններով, կրակներով և վառվող ջահերով:
- 22 Որի պատճառով հոտերը, քարշող անասունները և մարդիկ այստեղ այլևս տեղ չէին գտնում:
- IX—28* Արդ, ես տեղեկացրի Յիմային և նրան ասացի.—Գեղեցկությամբ փայլող Յիմա՝, Վիվանհատյի որդի:
- 29 Երկիրն ամբողջովին ծածկված է հոտերով, քարշող անասուններով, մարդկանցով, շներով, թռչուններով, կրակներով, վառվող ջահերով:
- 30 Անասունները, քարշող վեհադանիները և մարդիկ այլևս այստեղ տեղ չունեն:
- X—31 Յիման, ուրեմն, առաջ գնաց՝ օրվա լույսով մինչև կեսօրվա ժամը, հետևելով արևի ճանապարհին:
- 32 Նա բացեց հողը իր ոսկյա խոփով:
- 33 Նա այն ճեղքեց իր մտրակով,
- 34 Խոսելով այսպես.—Եղի՛ր ինձ նպաստավոր, վե՛հ Արմաիթի՜:
- 35 Առաջացի՛ր, տարածվի՛ր, իմ աղոթքների առաքինությամբ:
- 36 Որպեսզի կարողանաս կրել հոտերը, քարշող կենդանիները և մարդկանց*....
- XIX—37 Այսպես Յիման ընդլայնեց իր հողը և դարձրեց մեկ երրորդով ավելի, քան նախապես էր:
- 38 Ապա նա լրնդլայնեց նաև այդ հողը և երկու երրորդով մեծացրեց, քան նախապես էր:
- 39 Նա ընդլայնեց, վերջապես, երրորդ անգամ և դարձրեց երեք երրորդով ավելի, քան նախապես էր:

* Թվերի խախտումը գալիս է բնագրից:

** Ավետային հատուկ բնագրային կրկնություն, այդ իսկ պատճառով համապատասխան հատվածը հանել ենք (թարգմ.):

- XX—40 Այնժամ հոտերը, քարշող վրենդանները և մարդիկ կարողացան շրջել
այնտեղ իրենց ուզածի շահի:
- 41 Իրենց ուզածի պես, ըստ իրենց բարի հաճության:
- XXV—42 Ահուրա-Մազդան, արարիչը, հրավիրեց երկնադին Յագաթաների
ժողով, նշանավոր Այրանա-Վայեթայում⁵ անթերի արարչագործության
երկրում:
- 43—44 Շողշողուն Յիման՝ հրաշալի հոտերի տերը, հավաքեց ժողովի լավա-
գույն մարդկանց, հռչակված Այրանա-Վայեթայում՝ անթերի արարչա-
գործության երկրում:
- 45 Այդ ժողովին շողշողուն Յիման՝ հրաշալի հոտերի տերը, եկավ լա-
վագույն մարդկանցով՝ հռչակված Այրանա-Վայեթայում՝ անթերի
արարչագործության երկրում:
- XXII—46 Այնժամ Ահուրա-Մազդան ասաց Յիմային.
- 47 Մարմնավոր էակների վրա կտեղա ձմռան շարիքը:
- 48 Նրա հետ՝ մի թափանցող և կործանիչ ցուրտ:
- 49 Մարմնավոր էակների վրա կտեղա ձմռան շարիք:
- 50 Նրա հետ կթափվի ձյան մի առատ հորձանք,
- 51 Լեռների գագաթներից և բարձր բլրակներից:
- XXIII—52 Երեք տեսակի հոտեր պետք է հեռանան իրենց սովորական բնա-
վայելքից, ո՛վ Յիմա.
- 53 Նրանք, որոնք ապրում են վտանգավոր տեղերում:
- 54 Նրանք, որոնք ապրում են խոր հովիտներում:
- 55 Նրանք, որոնք ապրում են լեռների կատարներին:
- 56 Նրանք պետք է քաշվեն պատերով պաշտպանված բնակավայրեր:
- XXIV—57 Այս ձմռանից առաջ, այս երկրի վրա կային առատ մարգագե-
տիներ:
- 58 Ուժգին հեղեղամեներ, ապա՝ ձնհալք,
- 59 Ճանապարհի բացակայություն՝ մարմին ունեցող էակի համար, այս
հողի ամայացում,
- 60 Որի վրա երևում են այժմ փոքրիկ հոտերի ոտնահետքերը:
- XXV—61 Պատրաստի՛ր դու, ուրեմն, Յիմա, մի հանգստավայր, որի յուրա-
քանչյուր կողմը հավասար լինի ձիու մի օրվա անցած ճանապարհ-
հին:
- 62 Դու այնտեղ կտանես անասունների արտադրող սերմը, քարշող անա-
սուններ, մարդկանց, շներին, կրակ և քոցկլտացող ջահեր:
- 63 Կառուցի՛ր, ուրեմն, մի ցանկապատված հանգստավայր, որ չորս կող-
մերից ունենա ձիու մի օրվա անցած ճանապարհի երկարություն՝
որպես բնակավայր մարդկանց ծառայելու համար:
- 64 Պատրաստի՛ր այն չորս կողմերից ձիու մի օրվա անցած ճանապարհի
երկարությամբ, որպեսզի այն լինի եզների մակաղման տեղ:
- XXVI—65 Դու այնտեղ կհավաքես ջրերը՝ երկու հազար ոտք մեծությամբ
ունեցող տարածության վրա:
- 66 Այդ ջրերի մոտ տեղավորի՛ր թռչուններին:
- 67 Այդ մշտադալար հողի վրա, որը սնունդ է արտադրում՝ միշտ անվրեպ:
- 68 Դու այնտեղ կհաստատես բնակությունդ:
- 69 Կկառուցես մի տուն, կամարակապ սրահ, մի բակ՝ ցանկապատված
բոլոր կողմերից:
- XXVII—70 Այդ հանգստավայրը տար բոլորին՝ տղամարդկանց և կանանց,
ստեղծող սերմը,
- 71 Որոնք ամենամեծն են, լավագույնը, ամենագեղեցիկը այս երկրի վրա:
- 72 Տա՛ր նաև արտադրող սերմ՝ բոլոր տեսակի կենդանիների:
- 73 Երկրի վրա եղած ամենամեծ, ամենալավ, ամենագեղեցիկ կենդանի-
ների:
- XXVIII—74 Տա՛ր բոլոր տեսակի ծառերի սերմեր՝

- 75 Բոլոր նրանցից, որոնք այս հողի վրա ամենաբարձրներն են և տարածում են լավագույն բուրմունքը:
- 76 Տա՛ր նաև, հավասարապես, բոլոր տեսակի սննդամթերքների սերմեր:
- 77 Այս երկրի ուտելիքները՝ ամենահամեղ և ամենաանուշ բույրերով:
- 78 Խմբի՛ր դրանք զույգերով:
- 79 Եվ այդ բոլորը թո՛ղ լինեն անմահ այնքան ժամանակ, քանի կլինեն հանգստավայրում եղած մարդկանցից:
- XXIX—80 Թո՛ղ այնտեղ չլինեն ո՛չ վեճեր, ո՛չ շարակամ խոսքեր:
- 81 Ո՛չ թշնամություն, ո՛չ անհավատարմություն:
- 82 Ո՛չ շարություն, ո՛չ խաբեություն:
- 83 Ո՛չ նվաստություն, ո՛չ գառնություն:
- 84 Թո՛ղ բոլորովին չլինեն չափից ավելի մեծ ատամներ,
- 85 Մարմնի անհամաչափ մասեր:
- 86 Անրո-Մենյուաի՞ճ ձեռագրի ոչ մի հետք՝ տպված մարդկանց մարմինների վրա:
- XXX—87 Բարձրագույն ժայրում հաստատի՛ր ինը անցք:
- 88 Կենտրոնում՝ վեց, ներքին ժայրին՝ երեք:
- 89 Նախնական անցքերի մոտ՝ հազար տղամարդու և հազար կանանց սերմեր:
- 90 Կենտրոնի անցքերում՝ վեց հարյուր, վերջինների մոտ՝ երեք հարյուր:
- 91 Ոսկյա խոփով տարածի՛ր այս սերմերը հանգստավայրում:
- 92 Այդ շրջափակման համար պատրաստի՛ր մի լուսավոր դուռ, որն ինքն իրեն լուսավորվի ներսից:
- XXXI—93 Յիման, համենայնդեպս, սկսեց մտածել. «Ինչպե՞ս կառուցեմ այդ հանգստավայրը, այնպես, ինչպես ինձ հրահանգել է Ահուրա-Մազդան»:
- XXXII—94 Այնժամ Ահուրա-Մազդան նրան ասում է.— Գեղեցկությամբ փայլող Յիմա՝ Վիվանհաոյի որդի:
- 95 Ծեղքի՛ր գետինը վրդանկով, փորվի՛ր այն քո ձեռքերով,
- 96 Նույն եղանակով, ինչպես մարդիկ փորում են խոպանացած հողը:
- XXXIII—97 Ելնելով դրանից՝ Յիման կառուցեց մի հանգստավայր, որի յուրաքանչյուր շորս ուղղություններն ունեին ձիու մեկ օրվա անցած ճանապարհի երկարություն:
- 98 Այնտեղ նա տարավ արարող սերմեր՝ ոչխարների և արջառների, գրաստների, շների, թռչունների, կրակների և վառվող ջահեր:
- 99 Նա այդ արեց յուրաքանչյուր շորս ուղղություններով՝ ձիու մի օրվա անցած ճանապարհի երկարությամբ, մարդկանց բնակավայրի համար:
- XXXIV—100 Նա այդ արեց յուրաքանչյուր շորս ուղղություններով՝ ձիու մեկ օրվա անցած ճանապարհի երկարությամբ, եղների մակադման համար,
- 101 Նա այնտեղ հավաքեց ջրերը երկու հազար ոտք տարածությամբ շափով:
- 102 Զրեբի մոտ հաստատեց թռչունների բնակավայրը:
- 103 Այդ մշտադալար հողի վրա, որն անընդհատ սնունդ է արտադրում:
- 104 Նա այնտեղ հաստատեց բնակավայրեր:
- 105 Տուն, կամարակապ սրահ, բակ՝ ցանկապատված բոլոր կողմերից:
- XXXV—106 Նա այնտեղ տարավ տղամարդկանց և կանանց ստեղծող սերմը:
- 107 Որոնք ամենամեծն են, ամենագեղեցիկները, լավագույնները այս երկրի վրա:
- 108 Նա այնտեղ տարավ նաև արտադրող սերմը բոլոր տեսակի մակառող կենդանիների:
- 109 Երկրի վրա եղած ամենամեծ, ամենալավ, ամենագեղեցիկ կենդանիների:
- XXXVI—110 Նա տարավ բոլոր տեսակի ծառերի սերմերը:
- 111 Բոլոր նրանցից, որոնք այս հողի վրա ամենաբարձրներն են և տարածում են լավագույն բուրմունքը:

- 112 Նա տարավ Հավասարապես բոլոր տեսակի ուտելիքների սերմեր:
 113 Այս երկրի ուտելիքները՝ ամենահամեղ և ամենաանուշ բուրմունքով:
 114 Խմրեց դրանք զուլգերով:
 115 Որպեսզի այդ բոլորը լինեն անսպառ այնքան ժամանակ, քանի կլինեն հանգստավայրում եղած մարդկանցից:
 XXXVII—116 Թո՛ղ չլինեն այս բնակավայրում. ո՛չ վեճեր, ո՛չ շարակամ խոսքեր:
 117 Ո՛չ թշնամություն, ո՛չ անհավատարմություն:
 118 Ո՛չ չարություն, ո՛չ խաբեություն:
 119 Ո՛չ նվաստություն, ո՛չ վիշտ:
 120 Բոլորովին չլինեն չափից ավելի մեծ ատամներ:
 121 Մարմնի անհամաշարժ մասեր:
 XXXVIII—122 Անրո-Մենյուտի ոչ մի նշան՝ դաջված մարդկանց մարմինների վրա:
 123 Վերին ծայրում նա հաստատեց ինը անցք:
 124 Կենտրոնում՝ վեց, ներքին ծայրին՝ երեք:
 125 Նախնական անցքերի մոտ նա դրեց հազար տղամարդկանց և հազար կանանց սերմեր:
 126 Կենտրոնի անցքերում վեց հարյուր, վերջինների մոտ՝ երեք հարյուր:
 127 Նա տարածեց հանգստավայրում այս սերմերը ոսկյա խոփով:
 128 Այդ շրջափակման համար պատրաստեց մի դուռ, որն ինքն իրեն լուսավորվում է ներսից:
 XXXIX—129 Արարի՛չ իրական աշխարհի, էակ անբիծ.
 130 Խո՛ն բնույթի են լուսերը, որոնք փայլում են Յիմախի կողմից կառուցված հանգստավայրում:
 XL—131 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Կան իրենք իրենց վառվողներ, մյուսները ստեղծված բնույթ ունեն: Բոլոր լուսերը առանց պատճառի վառվում են երկնքում, արարված լուսերը տարածում են իրենց լույսը ներքևում՝ հանգստավայրի ներսում:
 132 Բոլորը միասին մեղ են երևում՝ աստղերը, լուսինը և արեք,
 133 Նրանց համար մի տարին հավասար է մեկ օրվան:
 XLI—134 Բոլոր քառասուն տարիներին մարդկային յուրաքանչյուր զուլգից ծնվում է մի զուլգ՝ մի աղջիկ և մի տղա:
 135 Այսպես է նաև բոլոր կենդանիների տեսակների համար:
 136 Եվ այս մարդիկ հանգստավայրում, որը կառուցեց Յիման, ապրում են ամենահրջանիկ կյանքով:
 XLII—137 Արարի՛չ իրական աշխարհի, անբիծ էակ:
 138 Ո՞վ պետք է հրապարակի մազդեզական օրենքը այս հանգստավայրում, որը կառուցել է Յիման:
 139 Ահուրա-Մազդան պատասխանեց.
 — Կարշիպթա թռչունը⁷, ո՞վ Զրադաշտ:
 XLIII—140 Իրական աշխարհի արարի՛չ:
 141 Ո՞վ է դրանց տերը և հոգևոր առաջնորդը:
 142 Ուրվաթաթ-Նարոն⁸ և դու, ո՞վ սուրբ Զրադաշտ:

III

- I—1 Մարմնական աշխարհի արարի՛չ, անբիծ էակ:
 2 Որտե՞ղ է, առաջին հերթին այն, փնչը պատճառ է երկրի գերագույն ուրախության:
 3 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Դա այնտեղ է, ուր մի արդար մարդ է հայտնվում, ո՞վ սուրբ Զրադաշտ:

- 4 Կրելով ձեռքին խորանի փայտը, բարսմունը⁹, ըմպանակը և սանդր:
5 Իր խաղաղ զգացմունքներում ըստ օրճնքի ասելով այս խոսքերը.— Ես
դիմում եմ ընդարձակ գլուղներ ունեցող Միթրային¹⁰ և Ռամա-Քասթ-
րային¹¹:
- II—6 Մարմնական աշխարհի արարի՛չ, անբի՛ծ էակ:
7 Որտե՞ղ է, երկրորդ հերթին այն, ինչը պատճառ է երկրի գերագույն
ուրախության:
8 Ահուրա-Մազդան պատասխանեց.— Դա այնտեղ է, ուր մի արդար մարդ
եառուցել է մի բնակավայր,
9 Լցված վրականերով, անասուններով, կանանցով, երեխաներով և ըն-
տիր մարդկանց խմբերով:
- III—10 Նշված ախժամ այս բնակավայրում առատութուն կենդանիների,
սրբության, արոտավայրերի, շների, կանանց, երիտասարդների, կրակ-
ների և ամենայն բարիքների:
- IV—11 Մարմնական աշխարհի արարի՛չ, անբի՛ծ էակ:
12 Որտե՞ղ է, երրորդ հերթին այն, ինչը պատճառ է երկրի գերագույն
ուրախության:
13 Ահուրա-Մազդան պատասխանեց.— Դա այնտեղ է, ուր մշակում են
ամենաշատ հասկիկներն, արոտավայրերի խոտեր և մրգատու ծառեր:
14 Այնտեղ, ուր ոռոգում են չոր հողը և յորացնում խոնավ հողը:
- V—15 Մարմնական աշխարհի արարի՛չ, անբի՛ծ էակ:
16 Որտե՞ղ է, չորրորդ հերթին այն, ինչը պատճառ է երկրի գերագույն
ուրախության:
17 Ահուրա-Մազդան պատասխանեց.— Դա այնտեղ է, ուր անասունները,
գրաստները բազմանում են ամենամեծ առատությամբ:
- VI—18 Մարմնական աշխարհի արարի՛չ, անբի՛ծ էակ:
19 Որտե՞ղ է առաջին հերթին այն, ինչը պատճառ է երկրի գերագույն
ուրախության:
20 Ահուրա-Մազդան պատասխանեց.— Դա այնտեղ է, ուր հոտերը և
գրաստները տարածում են իրենց մեզը՝ ամենամեծ քանակով:
- VII—21 Մարմնական աշխարհի արարի՛չ, անբի՛ծ էակ:
22 Ի՞նչն է, առաջին հերթին, որ ամենից շատ վշտացնում է երկիրը:
23 Ահուրա-Մազդան պատասխանեց.— Դա այնտեղ է, ուր գտնվում է
Արեգորա լեռը:
24 Այնտեղ, ուր դեբեր դուրս թռչելով դրույժի¹² քարանձավից, գալիս են
ժողովվելու:
- VIII—25 Մարմնական աշխարհի արարի՛չ, անբի՛ծ էակ:
26 Որտե՞ղ է, երկրորդ հերթին, այն, ինչ վշտացնում է երկիրը:
27 Ահուրա-Մազդան պատասխանեց.— Այնտեղ, ուր թաղում են ամենա-
մեծ քանակով շներ և մեռած մարդիկ:
- IX—28 Մարմնական աշխարհի արարի՛չ, անբի՛ծ էակ:
29 Որտե՞ղ է, երրորդ հերթին, այն, ինչ ամենից շատ վշտացնում է հողը:
30 Ահուրա-Մազդան պատասխանեց.— Դա այնտեղ է, ուր բարձրանում են
ամենաշատ դահմականներ¹³, ուր դնում են մարդկանց դիակները:
- X—31 Մարմնական աշխարհի արարի՛չ, անբի՛ծ էակ:
32 Որտե՞ղ է, չորրորդ հերթին, այն, ինչը ամենից շատ վշտացնում է
հողը:
33 Ահուրա-Մազդան պատասխանեց.— Դա այնտեղ է, ուր գտնվում են
Անրո-Մենյուսի ստեղծած էակների ամենամեծ թվով ապաստարան-
ներ:
- XI—34 Արարիչ մարմնական աշխարհի, անբի՛ծ էակ:
35 Որտե՞ղ է, հինգերորդ հերթին, այն, ինչը ամենից շատ վշտացնում է
հողը:
36 Ահուրա-Մազդան պատասխանեց.— Դա այնտեղ է, ո՞վ գերսուրբ Զրա-

- դաշտ, ուր կինը և անբիծ մարդու որդին քայլում են արգելված ճանապարհով՝
- 37 Գոսացած ճանապարհով, որ ծածկված է փողով, և արտաբերում են ողբագին ձայներ:
- XII—38 Արարի՛չ իրական աշխարհի, անբիծ էակ:
- 39 Ինչպիսին է, առաջին հերթին նա, ով ճաշակել է տալիս երկրին գերագույն ուրախությունը:
- 40 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Դա այն է, երբ հողից հանում են ամենամեծ քանակով մեռած շներ, մարդիկ՝ ախտեղից, ուր նրանք թաղված էին:
- XIII—41 Արարի՛չ իրական աշխարհի, անբիծ էակ:
- 42 Ինչպիսին է, երկրորդ հերթին նա, ով երկրին ճաշակել է տալիս դերագույն ուրախությունը:
- 43 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Դա, երբ քանդում և փորում են ավերի մեծ թվով գերեզմաններ, որտեղ հանգչում են մարդկանց դիակները:
- XIV—44 Թո՛ղ երբեք միայնակ մարդը չկրի մի մեռած մարմին:
- 45 Երբ մի մենակ մարդ մորում է մի դիակ,
- 46 Նասուար¹⁴ կմտնի նրա մեջ քթով, աչքերով, լեզվով, ականջներով, առջևից և հետևից:
- 47 Այս դրույթ Նասուար նետվում է եղունգների վրա:
- 48 Եվ հենց վատ մարդիկ, ում տիրում է այդ կերպ, պիղծ են ընդմիշտ:
- XV—49 Արարի՛չ մարմնական աշխարհի, անբիծ էակ:
- 50 Որտե՞ղ պետք է լինի տեղը այն մեղավորի, որը մենակ կրում է մի մեռած մարմին:
- 51 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Դա պետք է լինի այս երկրի ամենաչոր և ամենալեղր տեղում:
- 52 Այնտեղ, ուր հողը ամենաչորն է և ամենաանջրդին,
- 53 Ուր խիստ հազվադեպ են դալիս հոտերը և գրաստները:
- 54 Կրակը՝ որդին Ահուրա-Մազդայի, բարսմունը խրձած ճիպոտների ձևով՝ ըստ սրբազան ծեսի և անբիծ մարդը:
- XVI—55 Արարի՛չ մարմնավոր աշխարհի, անբիծ էակ:
- 56 Ի՞նչ տարածություն վրա պետք է լինի այդ վայանք կրակից, ի՞նչ հեռավորության վրա ջրից, ի՞նչ հեռավորության վրա ճիպոտների խրձի ձև ունեցող բարսմունից, ի՞նչ հեռավորության վրա անբիծ մարդկանցից:
- XVII—57 Ահուրա-Մազդան պատասխանեց.—30 քայլ կրակից, 30 քայլ ջրից, 30 քայլ ճիպոտների խրձի ձև ունեցող բարսմունից, 3 քայլ հեռու անբիծ մարդկանցից:
- XVIII—58 Այստեղ, այս փրկիչ վրա մազդեզական վրոնի պաշտողները կբարձրացնեն բոլոր կողմերից մի պատ:
- 59 Ապա այս մազդեզական կրոնի պաշտողները նրան կապահովեն սննդով և ապա կապահովեն հագուստներով:
- 60 Ամենապիտանիներից,
- 61 Որքան հնարավոր է փոքր քանակով:
- XIX—62 Թո՛ղ նրանք ուտեն այդ սնունդը, թո՛ղ նրանք հագնեն այդ հագուստները:
- 63 Մինչև որ նա դառնա ծեր, տկարամիտ և անկարող:
- XX—64 Երբ որ նա դառնա ծեր, տկարամիտ կամ անկարող:
- 65 Այնժամ ուժով և կրքով և ըստ օրենքի՝ մազդեզացիները թո՛ղ նրան տեղափոխեն լեռների կատարների վրա:
- 66 Թո՛ղ նրանք՝ նրա գլուխը կտրեն, թո՛ղ հանձնեն նրա մարմինը Սպենտա-Մենյուաթի¹⁵ ամենաբազմաթիվ, մաշկեր թռչունների, անշերտների:

- XXI—67 Թո՛ղ ասեն նրան, կտրելով գլուխը.—Այս մարդը խոստովանում է բոլոր մեղքերը, որ նա կատարել է մտովի՝ խոսքերով և արարքներով:
- 68 Եթե կան ես ուրիշ հանցավոր արարքներ, որ նա արել է,
- 69 Ահա լիովին քավություն:
- 70 Եթե նա այլ հանցավոր արարքներ չի կատարել.
- 71 Այնժամ այն ամենը, ինչ որ այդ մարդը արել է, ջնջվում է ընդմիշտ, հավիտենապես:
- XXII—72 Արարի՛չ իրական բարիքների, անբի՛ծ էակ:
- 73 Ո՞րն է երրորդը, որ պարզեում է երկրին մի շատ մեծ ուրախություն:
- 74 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Դա նա է, ով ավերում է ամենամեծ քանակի ապաստարաններ՝ Անրո-Մենյուսի արարածներին պատկանող:
- XXIII—75 Արարի՛չ իրական բարիքների, անբի՛ծ էակ:
- 76 Ո՞րն է չորրորդը, որ պարզեում է երկրին մի շատ մեծ ուրախություն:
- 77 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Դա նա է, ով աճեցնում է ամենաշատ հատիկեղեն, խոտեր, մրգատու ծառեր:
- 78 Կամ նա, ով ոռոգում է չորացած հողը և չորացնում է շատ խոնավը:
- XXIV—79 Որովհետև չկա ուրախություն հողի համար, որը երկար ժամանակ հանգչում է առանց մշակման:
- 80 Այնժամ, երբ նա կարող էր մշակվել երկրագործի կողմից.
- 81 Այդպիսիների համար, որ այն մշակում է, հողը մի քարզավաճ բնակավայր է:
- 82 Նա այնտեղ երջանկորեն մեծացնում է երիտասարդ աղջկան, մինչ նրա մայր դառնալը:
- 83 Եվ նրանք ունեն շնորհալի տղաներ՝ գերազանց հատկանիշներով:
- XXV—84 Նրան, ով աշխատում է հողի վրա ձեռքերով՝ աջ և ձախ, ձախ և աջ, ո՛վ սուրբ Զրադաշտ:
- 85 Հողին հարստություն է բերում:
- 86 Ինչպես մի բարեկամ, նստած մի զարդարած աթոռի վրա, տալիս է մի սիրելի բարեկամի՝ մի որդի կամ հարստություն:
- XXVI—87 Նրան, ով աշխատում է հողի վրա ձեռքերով՝ աջ և ձախ, ձախ և աջ, ո՛վ սուրբ Զրադաշտ:
- 88 Հողն այսպես է ասում.—Մարդ, որ ինձ մշակում ես բազուկներով՝ ձախ և աջ, բազուկներով՝ աջ և ձախ,
- XXVII—89 Ես միշտ կլինեմ բարեգործ այդ տեղանքի համար, ես միշտ կգամ դեպի քեզ:
- 90 Ես կբերեմ, բացի դաշտի հատիկեղենից, սնունդ ամեն տեսակի, այն ամենը, ինչ ես կարող եմ բերել:
- XXVIII—91 Նրան, ով չի մշակում հողը՝
- 92 Հողն ասում է.—Դու, որ ինձ չես մշակում բազուկներով՝ ձախ և աջ, բազուկներով՝ աջ և ձախ:
- XXIX—93 Դու միշտ կանգնած կլինես ուրիշների դռներին՝ նրանց թվում, ովքեր ուտելիք են մուրում:
- 94 Քեզ կբերեն ուտելիքի փշրանքներ, մինչ դու կանգնած կլինես դրսում:
- 95 Կբերեն բարիքներ, որոնք իրենք ունեն շատ մեծ առատություն:
- XXX—96 Արարի՛չ իրական աշխարհի, անբի՛ծ էակ:
- 97 Ի՞նչն է, որ ծաղկեցնում է մազդեզական օրերը:
- 98 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Դա ցորենի մշակումն է՝ եռանդով կատարված:
- XXXI—99 Ով արտադրում է ցորեն, նա արտադրում է սրբություն:
- 100 Նա զարգացնում է մազդեզական օրերը:

- 101 Նա ուժեղացնում է այս մազդեզական օրենքը, նա կերակրում է այս մազդեզական օրենքը:
- 102 Հարյուր ոտքերով:
- 103 Հազար ծծկերով:
- 104 Տաս հազար սրբադան ընծայաբերումով:
- XXXII—105 Երբ ցորենը ծլարձակում է, այնժամ դեերը զայրույթից վեր են թռչում:
- 106 Երբ ցորենը մաքրվում է, այնժամ դեերը ճիշեր են արձակում:
- 107 Երբ ցորենն աղացվում է, դեերն անհետ փախչում են:
- 108 Երբ աղացած ցորենը շաղախում են հացի համար, այնժամ դեերը մեռնում են:
- 109 Ահա թե ինչու դեերը պաշարում են բնակարանները, գլխավորապես արգելելու համար ցորենի արտադրումը:
- 110 Հատիկեղենի առատությունը նրանց փախցնում է ճիշտ այնպես, եթե նրանց բերանին հարվածես շիկացած երկաթով:
- XXXIII—111 Այդ պատճառով արտասանվում են այս մոգական խոսքերը.
- 112 Ոչ ոք առանց ուտելու, չունի ուժ:
- 113 Ո՛չ իսկական անարատության համար,
- 114 Ո՛չ եռանդագին հողը մշակելու, ո՛չ լույս աշխարհ բերելու աշխույժ երեխաներ:
- 115 Քանզի բոլոր մարմնական էակներն ապրում են սնվելով, սննդի բացակայության դեպքում ամեն ինչ մեռնում է:
- XXXIV—116 Արարի՛չ իրական աշխարհի, անբի՛ծ էակ:
- 117 Ո՞րն է հինգերորդը, որը պարգևում է երկրին մի շատ մեծ ուրախություն:
- XXXV—118 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Դա նա է, ո՛վ սուրբ Զրադաշտ, ով մշակում է այս հողը մի անբիծ մարդու համար և կատարում է իր գործը անթերի:
- 119 Եթե նա այն չկատարի անթերի և արդարապես, թո՛ղ վտարեն հողից՝
- 120 Դեպի մութ խավարը, կակիծները, դժոխքը,
- 121 Որն ամբողջովին պատած է սուր փշերով:
- XXXVI—122 Արարի՛չ իրական աշխարհի, անբի՛ծ էակ:
- 123 Եթե հողի մեջ թաղում են շներ և մեռած մարդիկ, և նրանք կես տարի մնում են առանց հողից հանվելու:
- 124 Ինչպիսի՞ն պետք է լինի այս ոճրի պատիժը:
- 125 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Թո՛ղ նրան ծեծեն խարազանի հինգ հարյուր հարվածով, Սրառաքաբանայի¹⁶ հինգ հարյուր հարվածով:
- XXXVII—126 Արարի՛չ իրական աշխարհի, անբի՛ծ էակ:
- 127 Եթե հողում թաղում են շներ և մեռած մարդիկ, և անցնում է մեկ տարի, առանց նրանց հանելու,
- 128 Ինչպիսի՞ն պետք է լինի այդ ոճրի պատիժը:
- 129 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Հազար հարված խարազանի, հազար Սրառաքաբանայի:
- XXXVIII—130 Արարի՛չ իրական աշխարհի, անբի՛ծ էակ:
- 131 Եթե հողում թաղում են շներ և մեռած մարդիկ, և անցնում է երկու տարի, առանց նրանց հանելու:
- 132 Ինչպիսի՞ն պետք է լինի այդ ոճրի պատիժը:
- 133 Ո՞րն է դրա քավումը,
- 134 Ո՞րն է միջոցը ապաշխարման:
- XXXIX—135 Ահուրա-Մազդան պատասխանեց.—Դրա համար չկա՛ պատիժ. չկա՛ քավություն, չկա՛ ապաշխարում:
- 136 Այս անքավելի գործերի համար ընդմիշտ և հավիտյան:
- XL—137 Ինչպե՞ս մի օր կարող էին նրանք քավություն ստանալ:

- 138 Պետք է իմանալ, եթե այդ մարդը ուխտյալ է մազդեզական օրենքի և հնազանդվում է նրան,
 139 Կամ եթե բոլորովին ուխտյալ չէ և նրան հնազանդ չէ:
 140 Որովհետև ջնջվում են նրանց մեղքերը, ովքեր դառնում են սուրբ օրենքի ուխտյալներ և նրան հնազանդվում են:
 141 Եվ եթե նրանք այլևս մեղք չեն գործում,
 XLI—142 Որովհետև մազդեզական օրենքն ազատում է այն մարդուն, որն իրեն պաշտում է, ո՛վ սուրբ Զրադաշտ:
 143 Նա ջնջում է դողությունը և խաբեությունը:
 144 Նա ջնջում է Յաթուանների¹⁷ կողմից ներշնչված ոճիրները, նա ջնջում է անբիծ մարդու ոճիրները:
 145 Նա ջնջում է մեռածների թաղումը:
 146 Նա ջնջում է անքավելի գործերը:
 147 Նա ջնջում է բոլոր մեղավոր արարքները, որ կարելի է կատարել:
 XLI—149 Մազդեզական օրենքը, ո՛վ սուրբ Զրադաշտ, անհետացնում է այն ամենը, ինչ մի անբիծ մարդ կարող է կատարել մտովի՝ խոսքերով կամ գործերով, ինչպես մի ուժեղ քամի փչելով աշից, մաքրագործում է արադորեն (սրբամ է երկնականաբար):
 150 Լավ գործ կատարելը երջանկություն է, ո՛վ Զրադաշտ:
 151 Մազդեզական սուրբ օրենքը հաստատեց մեղքերի քավությունը, որը նրանց ջնջեց ընդմիշտ:

ԵԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Վենդիգատը» Ավետայի առավել կարևոր հատվածներից է: Այն կապվում է ոչ միայն իրանական ցեղերի կազմավորման առաջին ժամանակահատվածի հետ, այլև գրում է մարդկության ծագման մասին: Զրադաշտական կրոնական առասպելի հերոսը՝ Յիման, համապատասխանում է հնդկական Վեդաների Յամային, նրա գործերը հիշեցնում են աստվածաշնչյան Ադամին և Նոյին: Յիմա, ինչպես և Ադամ, նշանակում է մարդու անունը, նա էլ Ադամի պես սխալվում է և ընկնում օձի իշխանության տակ:
 Զրադաշտ—զրադաշտական կրոնի հոգևոր առաջնորդը և տարածողը:
 2. Ահուրա-Մազդա—զրադաշտական կրոնի գերագույն աստվածը, համապատասխանում է հունական Զևսին, հռոմեական Յուպիտերին, հայկական Արամազդին:
 3. Յիմա—առաջին մարդը, որին վերագրվում է 1000 տարի տևող երջանիկ թագավորություն:
 4. Արմաիթի—մայր հողը, Ահուրա-Մազդայի իմաստուն դուստրը:
 5. Այրանա-Վայեթա—այն երկիրը, ուր հռչակված են Ահուրա-Մազդան և Զրադաշտը: Արիացիներին ծնող հողը, բնակավայրը, արիական ցեղի ծննդավայրը:
 6. Անրո-Մենյուա—չար էակների ոգին, դեերի առաջնորդը, համապատասխանում է չար Ահրիմանին, ծղնիկ Կողբացու մոտ եղած Արհմին, որն արարչագործում է բոլոր չար արարածներին:
 7. Կարշիպթա թուռն—թուռնների թագավոր, որ զրադաշտական օրենքը հրապարակում է թուռնների լեզվով: Հիշեցնում է Նոյյան աղավնուն:
 8. Ուրվաթաթ Նարո—Զրադաշտի երրորդ որդու անունն է: Նա համարվում է հողագործ դասի հայրը և հիմնադիրը:
 9. Բարամուն—ճիպտոների խումբ, որը զրադաշտական կրոնի սպասավորները բռնում էին զոհաբերության ծեսի ժամանակ:
 10. Միթրա—զրադաշտական կրոնի ոգիներից, աստվածային լուսի ոգին:
 Ավետայի որոշ մասերում Միթրային նվիրված են բանաստեղծական ընտիր հատվածներ:
 11. Ռամա-Քասթրա—բարի ոգի, Միթրայի գործակիցը և օգի ոգին:
 12. Դրույժ—չար ոգի, դև:
 13. Գահմակա—այն հատուկ տեղը, ուր զնում էին զրադաշտական կրոնի հավատացյալների դիակները՝ թուռնների համաք որպես կեր:

14. Նասուս—դե, տե՛ս դրույժ:

15. Սպենտա-Մենյուս—կյանքը, նրա զարգացումը արարող ոգին: Այդ բարի ոգու ստեղծածներն են՝ հողը, մթնոլորտը, աստղերը, պիտանի կենդանիները, մարդը և բարի ոգիները:

16. Սրառչաբարանա—պաշտպանը Զրադաշտի հավատացյալների: Այն պաշտպանում է մարդկանց զոդերից, մարդասպաններից, մահվանից: Նա մարդու պաշտպանն է այնպես, ինչպես շունը՝ հոտի:

17. Յաթուսներ—չար ոգիներ: